ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

10 մարտի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Ալիխան Համեյանը, Սերժիկ Մուրադովը, Անզոր Շաբոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արամ Խուդոյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 10-ի N 2 հերթական նիստի օրակարգը.

1.Ապագյազ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի «14»-ի n 44 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
2.Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության համար մրցույթ հայտարարելու մասին,
3.Ալագյազ համայնքում սխալմամբ քաղաքացու անունով հաշվառված հողմասը համայնքին փոխանցելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 9)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ «14»-Ի N 44 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ)

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի «14»_ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 44 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 10)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Չեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի հիման վրա համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկը, ինչպես նաև Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայտարարել վարձակալության համար մրցույթ Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի համար՝ ըստ հավելված 1-ի
2.Վարձակալության ամսական վճարների մեկնարկային գները սահմանել տվյալ հողատեսքի զուտ եկամտի 15 %-ի չափով մուծվող նախավճարի 5%-ի չափով,
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 11)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԽԱԼՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՈՒՆՈՎ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀՈՂՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Չեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.04.2021թվականի N 698-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ կադաստրի կոմիտեի 03.03.2025 թվականի N Կ-03032025-02-0067 որոշումը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ալագյազ համայնքին փոխանցել Ալագյազ համայնքի, Ալագյազ վարչական բնակավայրի, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 1/2 հասցեում գտնվող 02-006-0011-0007 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.063 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը:
2.Աշխատակազմի քարտուղարին՝ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 12)*

Ավագանու անդամներ

ՖԱՅԶՈ ԱԼԻՅԱՆ

ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ Արամ Խուդոյանը _____